

ՊԱՅՐՈՆԸ «ԲԱԶՄԱՎԷՊԻ» ԷԶԵՐՈՒՄ

Ու հոս դէպքով եկաւ երգիչն Հարությունի
Տոշկըւած ի՛ր կիրքերուն բո՛ւոն հորձերէն,
Խաղաղութիւն կը փնտռէր, սնունդ իր հոգւոյն,
Երգելով իր երգն երկնքին ու ծովուն:

Թ. Նեղիանի¹

1843ին Հ. Գաբրիէլ Այվազովսկին հիմնում է Վենետիկի Մը-
խիթարեան միաբանութեան «Բազմավէպ» հայագիտական, բանա-
սիրական, գրական հանդէսը, որն իր հիմնադրման առաջին օրո-
ւանից ընթերցող հասարակութեանը ծանօթացնում է ոչ միայն
հայ, այլեւ եւրոպական գրականութեան հետ:

1816-1818 թուականներին ապրելով Վենետիկում՝ անգլիացի
մեծ բանաստեղծ Ջորճ Կորտոն Պայրոնը (1788-1824) բազմիցս
առնչուել է Մխիթարեանների հետ, Ս. Ղազար կղզում սովորել է
հայերէն, կատարել հայագիտական ուսումնասիրութիւններ, հա-
մագործակցել Մխիթարեան միաբանութեան գիտնական-վանա-
կանների հետ²: Եւ, միազամայն բնական է, որ Մխիթարեաններն
առաջիններից էին հայ իրականութեան մէջ, որ անդրադարձել
են Պայրոնին եւ նրա ստեղծագործութեանը՝ իրենց հրատարակած
գրքերում, ժողովածուներում եւ գրական հանդէսներում:

Սոյն զեկուցման նպատակն է ժամանակագրական կարգով՝

- քննել «Բազմավէպում» հրատարակուած Պայրոնի երկերը.
- լուսաբանել Պայրոնի եւ նրա ստեղծագործութիւնների մասին «Բազմավէպ»ում զետեղուած յօդուածները, ուսում-
նասիրութիւնները եւ ներբողները:

1 Նեղիւնի, Թ., *Նոսպատկեր Ս. Ղազարու*, «Բազմավէպ», 1926, № 10, 305:

2 Այդ մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Բե՛հԱ.Ռե՛Ա.Ն., Ա., *Բայրոնը եւ հայ
իրականութիւնը* (Հայերէն եւ անգլերէն), Երեւան 2013:

ՊԱՅՐՈՆԻ ԵՐԿԵՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ԷԶԵՐՈՒՄ

«Բագմավեպ» հանդէսի հիմնադրումից երեք տարի անց, դեռևս 1846ին, դրա էջերում հանդիպում ենք մի բանաստեղծութեան, որի ոչ հեղինակը, ոչ էլ թարգմանիչը նշուած չեն³: Առաջին իսկ ընթերցումից զգացւում է, որ դա մի հատուած է Պայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը» հանրայայտ բանաստեղծութիւնից, իսկ աւելի մանրամասն ուսումնասիրութիւնից պարզւում է, որ այդ բանաստեղծութիւնը իրենից ներկայացնում է նշուած բանաստեղծութեան չորրորդ նուագի 153-159 իննեակները՝ Հ. Ղ. Ալիշանի թարգմանութեամբ, որոնք աննշան փոփոխութիւններով ընդգրկուել են 1852ին Մխիթարեանների հրատարակած «Ծաղկափաղ ֆերթողաց անգղիացոց» ժողովածուում (անգլերէն եւ հայերէն)՝ «Տաճար Ս. Պետրոսի» վերնագրով⁴: Յաւօք, այստեղ այդ բանաստեղծութեան թարգմանիչը նոյնպէս չի նշուել: Սակայն, կասկածից վեր է, որ դա թարգմանել է Հ.Ղ. Ալիշանը: Դրանում համոզուելու համար բաւական է «Չայլդ Հարոլդի ուխտագնացութիւնը» բանաստեղծութեան չորրորդ նուագի 153-159 («Տաճար Ս. Պետրոսի») իննեակները համեմատել Մխիթարեանների յետագայ հրատարակութիւնների հետ, որտեղ գետեղուել են դրանք (ՃՄԳ-ՃՄԹ իննեակներ) եւ նշուել է թարգմանիչը՝ Հ. Ղ. Ալիշան: Ճիշտ է, յետագայ հրատարակութիւններում կան որոշ, հիմնականում խմբագրական բնոյթի փոփոխութիւններ, սակայն թարգմանութեան կառուցուածքը, ոճը եւ արուեստն ընդհանուր առմամբ նոյն ձեւագիրն ունեն: Բացի դրանից, 1974ին «Հայ ընտանիք» ամսագրում գետեղուած մի անստորագիր յօդուածից (հայերէն եւ անգլերէն) տեղեկանում ենք (մեր կարծիքով տեղեկութիւնը միանգամայն հաւաստի է), որ Հ. Ղ. Ալիշանը թարգմանել է Պայրոնի «Քանի մը քնարերգութիւններ, որոնք ամփոփուած են մէկ հատորի մէջ եւ լոյս տեսած 1870ին»⁵: Այստեղ խօսքը 1870ին հրատարակուած «Lord Byron's Armenian Exercises and Poetry» (անգլերէն եւ հայերէն) ժողովածուի մասին է, որտեղ գրեթէ անփոփոխ գետեղուած են «Ծաղկափաղում» ընդգրկուած Պայ-

3 Սուրբ Պետրոս ի Հռոմ, «Բագմավեպ», 1846, № 16, 247-248:

4 *Beauties of English Poets – Ծաղկափաղ ֆերթողաց անգղիացոց*, S. Lazzaro, 1852, 94-105:

5 *Լորտ Պայրըն հայ գրականութեան մէջ (անստորագիր)*, «Հայ ընտանիք», 1974, № 11-12, 8:

րոնի բոլոր (թուով՝ վեց) բանաստեղծութիւնները, այդ թւում՝ նաեւ վերոյիշեալ բանաստեղծութիւնը⁶:

Անհրաժեշտ է յիշատակել, որ Մխիթարեաններն, ընդհանրապէս մեծ տեղ էին տալիս թարգմանութիւններին: Երբեմն Պայրոնից կատարուած թարգմանութիւններն ուղեկցուում են նաեւ կենսագրական բնոյթի առաջաբաններով եւ ակնարկներով: Այսպէս, «Բագմավէպ»ի 1853ի համարներից մէկում տպագրուել է մի յօդուած՝ ցլամարտի մասին⁷: Յլամարտի ընթացքը մանրամասն նկարագրելուց յետոյ, յօդուածի վերջում, հեղինակը նշում է, որ իսպանական այդ հանդիսախաղին ականատես են եղել եւրոպացի շատ գրողներ, որոնք յետագայում այն նկարագրել են իրենց չափածոյ եւ արձակ ստեղծագործութիւններում, եւ, «իբրև նկարագրական մասին ամենագեղեցիկ օրինակ», բերում է «Լօտո Պայրը՛ն անգլիացի մեծ քերթողին տուած վառվռուն նկարագիրը իր Չայլտ շարլտ ըսուած հոչակաւոր քանաստեղծութեանը մէջ»⁸: Այստեղ բերուած է մի հատուած Պայրոնի «Չայլդ շարլդի ուխտագնացութիւնը» բանաստեղծութեան առաջին նուագից՝ ՀԲ-Ձ (72-80) իննեակները՝ Խ. Գ.-ի թարգմանութեամբ: Մեր կարծիքով Խ. Գ.-ն նոյն ինքը՝ հայ բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախօս եւ եկեղացական գործիչ Հ. Խորէն Գալֆայեանն (1832-1892) է, ով յաճախ ստորագրել է՝ Հ. Խ. Գ., Խ. Վ. Գ., Խ. Նար-Պեյ, Խորէն Նար-Պեյ եւ այլ ծածկանուններով: Նշենք, որ այդ իննեակներից առաջինի եւ վերջինի թարգմանութիւնը լրիւ չէ (բերուած է միայն դրանց առաջին քառատողերի թարգմանութիւնը):

Շատ յաճախ նոյն ստեղծագործութիւնը թարգմանել են տարբեր հեղինակներ՝ թէ՛ Մխիթարեաններ, թէ՛ այլ թարգմանիչներ: Այսպէս, օրինակ, 1858ին ծովին նուիրուած մի քանի բանաստեղծութիւնների շարքում «Բագմավէպ»ում լոյս է տեսնում մի հատուած «Չայլդ շարլդի ուխտագնացութիւնը» բանաստեղծութեան չորրորդ նուագից (178-184 իննեակները) «Առ Ովկեան» վերնագրով⁹, իսկ 1922ին այդ հատուածը Յովհաննէս Մասեհեանի (1864-1931) թարգմանութեամբ հրատարակուում է Վիեննա-

6 Lord Byron's Armenian Exercises and Poetry (անգլերէն եւ հայերէն), S. Lazzaro, 1870, 114-125:

7 Տե՛ս Խ. Գ., Յլամարտութիւն, «Բագմավէպ», 1853, № 21, 326-331:

8 Անդ, էջ 329:

9 Տե՛ս Լ. ՊԱՅՈՒՆ, Առ Ովկեան, «Բագմավէպ», 1858, № 6, 173-174:

յուժ լոյս տեսնող «Արեգ» ամսագրում՝ «Ովկիանոսին» վերնագրով¹⁰: Առաջին թարգմանութեան մէջ, որտեղ չի նշուած թարգմանիչը, պահպանուել է բնագրի կառուցուածքը (իննեակները), իսկ երկրորդ թարգմանութեան մէջ այն խախտուել է (իննեակները հիմնականում թարգմանուել են 10-11 տողով, իսկ մէկական իննեակ՝ նոյնիսկ 12 եւ 13 տողով): Առաջին թարգմանութիւնը պատկանում է Հ.Ղ. Ալիշանին: Դրանում մենք համոզուում ենք, երբ այն համեմատում ենք Հ. Ղ. Ալիշանի թարգմանութեամբ «Չայիդ Հարոյի ուխտագնացութիւնը» բանաստեղծութեան չորրորդ նուագի յետագայ հրատարակութիւններում¹¹ զետեղուած համապատասխան հատուածի հետ: Համեմատութիւնից պարզուում է, որ չորրորդ նուագի առանձին գրքով լոյս տեսած տարբերակում կան չնչին, շատ աննշան փոփոխութիւններ եւ շտկումներ: Այսպէս, օրինակ, 1858ի հրատարակութեան մէջ 178րդ իննեակի առաջին տողում բերուած «անտառ անառնաձայն եւ անկոյտ» արտայայտութիւնը 1860ի հրատարակութեան մէջ փոխարինուել է «անտառ անառնապարհ եւ անկոյտ» արտայայտութեամբ, որ, նախ, աւելի լաւ է հնչում հայերէն եւ, երկրորդ, աւելի մօտ է բնագրին (անգլերէն՝ pathless woods): Այնուհետեւ, 182րդ իննեակի «Եւ բըռնաբար գահ իւրեանց արկանէին թագազարդ, // Յեկաց իրժից եւ ստըրկաց նըւանեցան պիւնֆն այն» երկտող փոխարինուել է «Որպէս յետոյ արկին անդ բըռնաւորաց ձեռք աղարս: // Սփռնֆն այն յուժք եւ սըտըրկ ցըւանեցան յօտարաց» երկտողով, որն արտայայտելով նոյն միտքը, կարծես, հնչում է աւելի անկաշկանդ (անգլերէն՝ And many a tyrant since; their shores obey // The stranger, slave, or savage; their decay), եւ այդպիսի մի քանի ոչ էական փոփոխութիւններ եւս: Դա միանգամայն բնական է եւ բացատրելի, քանի որ այնպիսի մի քնարերգու, ինչպիսին էր Ալիշանը, նոր, հրատարակութեան ժամանակ, չէր կարող չանդադառնալ թէ՛չուզեւ իր իսկ թարգմանութեանը եւ կատարել որոշ յղումներ, խմբագրական ուղղումներ ու շտկումներ: Միաժամանակ նշենք, որ «Չայիդ Հարոյի ուխտագնացութիւնը» հայերէն ամբողջութեամբ հրատարակուել է միայն 1965ին՝ Հենրիկ Սեւնի (1925-2008)

10 Տե՛ս ԲԱՅՐՈՆ, Ովկիանոսին. Բայրոնի «Չայիդ Հարոյ»-ից, «Արեգ», 1922, № 5, 287-289:

11 ԲԱՅՐՈՆ, Իտակիա. Չայիդ Հարոյ պոեմի 4-րդ երգը (անգլերէն եւ հայերէն), Ս. Ղազար, 1860, 1890, 1891, 1901:

Թարգմանութեամբ¹², որտեղ թարգմանիչը նոյնպէս պահպանել է հեղինակի ընտրած կառուցուածքը՝ իննեակները:

«Բազմավէպ»ի 1904ի տարբեր համարներում հայ բանաստեղծ Յովհաննէս Պալեանի թարգմանութեամբ լոյս են տեսնում Պայրոնի որոշ բանաստեղծութիւններ «Հրէական մեղեդիներ» շարքից՝ «Տեսիլն Պաղտասարի» (№ 7), «Կործանումն Սենեֆերիմի», «Լացեմ ի վրայ...» եւ «Բաբելոնեան ջրոց մօտ...» (№ 8), «Մեռար, հեռացար...» (№ 11): Նշենք նաեւ, որ Պալեանը, ինչպէս «Բազմավէպ»ում, այնպէս էլ այլ պարբերականներում, բացի Պայրոնի ստեղծագործութիւններից, հանդէս է եկել նաեւ Կեօթէի, Չեխովի, Փոլշկինի, Լեբմոնտովի եւ այլ գրողների ստեղծագործութիւնների թարգմանութեամբ:

«Բազմավէպ» 1905ի երրորդ համարում լոյս է տեսնում Պայրոնի «Յետին տողք Պայռընի» բանաստեղծութիւնը (թարգմ. Ալիշան), որի վերնագրից անմիջապէս յետոյ թոյլ է տրուել անճշտութիւն՝ գրուել են «ի Փետրուարի, 1824» բառերը (ի միջի այլոց, այդ անճշտութիւնը բացակայում է բանաստեղծութեան 1870ի, այսինքն՝ հայերէն առաջին հրատարակութեան մէջ¹³, որտեղ նշուած է՝ «ի Յունուար, 1824»): Բացի դրանից, բանաստեղծութիւնից անմիջապէս յետոյ նշում է, որ այն անտիպ թարգմանութիւն է: Դա նոյնպէս անճշտութիւն է, քանի որ այն, ինչպէս արդէն նշել ենք, դեռեւս 1870ին տեղ է գտել Մխիթարեանների հրատարակած Պայրոնի «Հայերէն վարժութիւնները եւ բանաստեղծութիւնները» ժողովածուում: Ինչպէս յայտնի է, սա Պայրոնի վերջին բանաստեղծութիւնն է, որ գրել է իր ծննդեան երեսունվեցերորդ տարեդարձի օրը՝ 1824ի Յունուարի 22ին: Պայրոնի զինակից, իտալիայի քարպոնարական շարժման մասնակից, կոմս Փիեթրոյ Կամպալի վկայութեամբ, «Այդ առաւօտեան Լորդ Պայրոնը դուրս գալով իր ննջարանից եւ մտնելով այն սենեակը, որտեղ հաւաքուել էին գնդապետ Ստանհոփն ու իր ընկերներից ոմանկ, ժպտալով սաաց. «Անցեալ օրը Դուք դժգոհում էիք, որ ես այժմ բանաստեղծութիւններ չեմ գրում: Այսօր իմ ծննդեան օրն է, եւ ես հէնց նոր աւարտեցի մի բան, որ, կարծում եմ, աւելի լաւն է, ինչ սովորաբար գրում եմ»: Այնուհետեւ նա ներկայացրեց այս հրաշալի եւ յուզիչ բանաստեղծութիւնը»¹⁴: Այս բանաստեղծութեան մէջ Յունաստանի

12 ԲԱՅՐՈՆ, *Երկերի ժողովածոյ*, Երևան, 1965, 99-275:

13 Lord Byron's *Armenian Exercises and Poetry*, 162-167:

14 *The Complete Works of Lord Byron, in one volume*, Paris, 1835, 906.

ազատութեան համար պայքարող բանաստեղծը կարծես թէ հանրագումարի է բերում իր ապրած երեսունվեց տարիները, ապրելու իմաստը, կանխագգում իր մօտալուտ մահը: Նրա կենանքի օրերը նմանուէլ են դեղնած տերեւների, սիրոյ ծաղիկները եւ պտուղները, գնացել են, մնացել միայն տանջանքն ու ցաւը:

Ժամ է սրբոխի առնուլ արդ դուլ եւ դադար,
 Զի շարժել զայլս այսուհետեւ ոչ գօրէ,
 Եւ թէպէտ չի՛ք որ յիս հայի սիրաբար,
 Այլ սիրել միշտ ինձ քաղցր է,
 Եկեալ հասի՞ն սաղարթօ՛ կենաց ազգուն
 Ի թօթափել մըրգաց սիրոյն եւ ծաղկան,
 Որդն եւ երբ արդ եւ ցաւալից անձկութիւն,
 Սո՛քա եւեթ ինձ մըման:¹⁵

(Թարգմ. Հ. Ղ. Ալիշան)

Սակայն բանաստեղծի համար կայ Յունաստանի ազատութեան համար մղուող պայքարը:

Զարթի՛ր, - չասեմ քեզ, Յունաստան, զարթեար դու -
 Զարթի՛ր հոգիդ իմ, օ՛ն, հայեա՛ց տես, ընդ ո՞ր
 Արիւն սրբոխի ի լիճն իւր մայր հեղուցու,
 Եւ ապա հա՛ր, հար ի խոր:¹⁶

Կոմս Փ. Կամպայի վկայութեամբ՝ «Այս տողերից, ինչպէս նաեւ նրա առօրեայ խօսակցութիւններից, մենք գիտակցում ենք, որ ձրգտումն ու յոյսը անփոփոխ սեւեռուած էին դէպի Յունաստան իր արշաւի փառասանծ նպատակի վրայ, եւ նա ուներ անիրական ցանկութիւն վերադառնալ յաղթանակած կամ չվերադառնալ»¹⁷: Մահուանից ընդամէնը երեք ամիս առաջ գրուած այս բանաստեղծութիւնը¹⁸

15 Յետին տող՝ Պայտրնի. ի Միսսոյունգի, ի փետրուարի, 1824, «Բազմավէպ», 1905, № 3, 128:

16 Անդ:

17 *The Complete Works of Lord Byron*, 906.

18 Բայրոնի վերջին՝ «Այսօր լրանում է իմ երեսունվեցերորդ տարին», բանաստեղծութեան թարգմանութեամբ հանդէս են եկել տարբեր թարգմանիչներ: Այսպէս, օրինակ, այս բանաստեղծութեան թարգմանութիւնը 1847-ին տպագրուել է «Ազգասէրի» № 91-ում՝ Օ. Ֆ. ստորագրութեամբ, 1905-ին՝ «Մուրն» ամսագրի հինգերորդ համարում՝ Յ. Մասեհեանի թարգմանութեամբ: Այս բանաստեղծութեան թարգմանութեան այլ տարբերակներ երևում են նաեւ «Մասեաց աղանի» ամսագրում (1860, № 12, թարգմանիչը չի նշում) եւ «Արագածում» (1926, № 11՝ Լիւսի ստորագրութեամբ):

լի է անսահման թախիծով ու տիրութեամբ: Սակայն այդ տխուր տողերի միջից մեր առջև վեր է յառնում Պայրոնի իր համարձակ ոգով, որը պատրաստ է իրեն զոհել յանուն Յունաստանի: Այս բանաստեղծութեան մէջ, ինչպէս նշուեց վերեւում, Պայրոնը կարծես թէ մարգարէաբար գուշակում է իր մօտալուտ մահը: Բանաստեղծը մահանում է 1824ի Ապրիլի 19ին:

«Բազմավէպ» 1924ի ապրիլեան համարում մի անգամ եւս հանդիպում ենք Պայրոնի վերջին բանաստեղծութեան՝ Ալիշանյի թարգմանութեամբ¹⁹: Այստեղ արդէն ուղղուած են հանդէսը 1905ի երրորդ համարում տեղ գտած անճշտութիւնները՝ նշում է, որ բանաստեղծութիւնը գրուել է «ի Յունուար, 1824» եւ հայերէն տպագրուել է դեռեւս 1870ին Վենետիկում: Այս համարում բերում են նաեւ հատուածներ Պայրոնի՝ հայ մշակոյթին, պատմութեանն ու լեզուին վերաբերող նամակներից եւ օրագրութիւններից (անգլերէն եւ հայերէն, թուով տասնհինգ)²⁰: Բացի դրանից, զետեղուել են «Հայերէն-անգլերէն ֆերականութեան» ձեռնարկի համար նախատեսուած Պայրոնի գրած առաջաբանը եւ թ. Մուրի՝ Պայրոնի որոշ նամակների վերաբերեալ կենսագրական ծանօթագրութիւնները:

«Բազմավէպ»ի 1924ի հինգերորդ համարում հանդիպում ենք Պայրոնի որոշ բանաստեղծութիւնների՝ «Հրեական մեղեդիներ» շարքից²¹ («Ո՛հ լացէ՛», «Յորդանանու փերուն վրայ», «Յեփթայէի աղջիկը», «Բաղդասարի տեսիլքը», «Կոտորած Սենեֆերիմի բանակին»)՝ Ա. Ղազիկեանի²² թարգմանութեամբ:

19 ԲԱՅՐՈՆ, Այսօր լինիմ ամաց երեսնից եւ վեցից (Յետին Տող՝ Պայրոնի), «Բազմավէպ», 1924, № 4, էջ 119:

20 Byron's Letters and Journals: with Biographical Notes – նամակներ եւ օրագրութիւններ Լորտ Պայրոնի. հանդերձ կենսագրական ծանօթութիւններով, «Բազմավէպ», 1924, № 4, 122-132:

21 ԲԱՅՐՈՆ, Երրայական մեղեդիներ, «Բազմավէպ», 1924, № 5, 173-175:

22 Ղազիկեան, Արսէն (1870-1932), հայ մատենագետ, քարգմանիչ, մանկավարժ: Դասական եւ եւրոպական գլուխ-գործոցների քարգմանիչ: Թարգմանութիւններ է կատարել վերգիլիոսի, Հոմերոսի, Սոփոկլեսի, ինչպէս նաեւ Ֆրանսիացի, անգլիացի եւ գերմանացի գրողների ստեղծագործութիւններից: Հայ մամուլը Ղազիկեանին անուանել է «Աշխարհաբար հայերէնի պահակ կամ պահապան»:

«ԲԱԶՄԱՎԷՊԸ» ՊԱՅՐՈՆԻ ԵՒ ՆՐԱ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առանձին-առանձին անդրադառնանք «Բազմավեպ»ում գե-տեղուած Պայրոնին նուիրուած ներբողներին եւ նրա ու իր ստեղծագործութիւնների մասին ուսումնասիրութիւններին:

Ներքողներ Պայրոնին հայ բանաստեղծներից: Շատ հայ բանաստեղծներ ներբողներ են ձօնել եւ բազմաթիւ սրտաուռչ տողեր նուիրել հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Պայրոն-բանաստեղծին: Դրանց միջոցով հայ բանաստեղծները բնորոշել են ազատութեան համար մարտնչող Պայրոն-մարտիկին, ինչպէս նաեւ հայոց լեզուն, հայ գրականութիւնն ու հայ մշակոյթն ուսումնասիրող մեծ անհատին՝ տալով նրա խռովայոյց հոգու, խոհերի եւ պոռթկումների իրական նկարագիրը: Այստեղ մենք կ'անդրադառնանք միայն «Բազմավեպ»ում գետեղուած ներբողներին:

Հայ մշակոյթի երախտաւոր, «Բազմավեպ» հանդէսի բազմամեայ խմբագիր (1930-1939, 1952-1953), բանաստեղծ Հ. Եղիա Փէչիկեանը (1895-1964) իր «Պայրնեան ձիւննիք» բանաստեղծութեան մէջ, որ լոյս է տեսել «Բազմավեպ»ում 1924ին, անդրադառնում է թէ՛ Մխիթար Սեբաստացուն, ով գեռեւս Պայրոնի ժամանումից մէկ դար առաջ հիմնել էր իր միաբանութիւնը, թէ՛ Պայրոնին, ով ողջունել է Մխիթարեան հայրերին, որոնց «տեսքը լուռ ու վրսեմ» հաղորդել է անգլիացի բանաստեղծին Արեւելքի վեհ ոգու մասին,

Սիւք մը յանկարծ շնչեց սրտին հըրատապ,
Սեբաստացոյն ձեռակերտէն էր անդորր,
Ուր դար մ'առաջ բոյն էր դըրած մագապուրծ
Արեւելքի փոքորիկէն աւերիչ:
Սլացաւ իսկոյն կոնտուլայով իրոխտապանծ
Երջանկութեան կղզոյն պփերն ողջունել,
Եւ ալեւոր Հարց տեսքը լուռ ու վրսեմ
Պատմեց անոր Արեւելքի ոգին վեհ:²³

Այս բանաստեղծութեան մէջ Հ. Ե. Փէչիկեանը կերտել է մի մարդու կերպար, ով սիրել է ապրել յաւերժական գիւթանքով ու լսել «հեզամնջիկ ալեաց օրօրը» եւ ում գերել են բնութեան գեղեցկութիւնը, հեռաւոր ափերը, ժողովուրդների ազատութեան համար մղուած մարտերն ու յաղթանակը:

23 Փէչիկեան, Հ. Ե., Պայրնեան ձիւննիք. ի Ա. Ղազար, «Բազմավեպ», 1924, № 10, 339:

Սիրեց ապրիլ յաւերժական դիւթամեմով,
 Հեզամնջիկ այլեաց օրօրը լըսել·
 Յափշտակուած բնութեան գեղով՝ նա տեսաւ
 Հեռու ափեր, ազատութեան մարտեր գոռ,
 Գաղափարի եւ գէմներու յաղթանակ:²⁴

*Վենետիկում ապրած տարիներին (1816-1819) ազատութեան
 կայծը հրդեհել է Պայրոնի ամբողջ էութիւնը, եւ նա, ֆէչիկեանի
 արտայայտութեամբ, ցանկացել է*

Հոմերական ու սոփոկլեան շիրիմներն
 Իր արիւնով սրբել անքիծ անարատ·
 Համնարներու, Մուսաններու մետերուն
 Պիմդ շղթաները գերութեան խորսակել:²⁵

Իսկ դրանից յետոյ, հրաժեշտ տալով Ս. Ղազարին, բանաստեղծը մեկնում է ռազմի դաշտ, որտեղ նրան սպասում է դիւցազնի մահ: Նախքան Յուսաստան մեկնելը, Պայրոնը վերջին անգամ այցելում է իր հայ բարեկամներին, վերջին անգամ հայեացք ձգում մտաւորական-եկեղեցականներին եւ բացականչում.

«Խաղաղութեանն այն՝ գոր հոգիս ըմբոշխնեց
 Զընաշխարհիկ այս կղզեկինն անկեան մէջ՝
 Վըլկայ, քարոզ թող ըլլայ սուրբ ձիթեմին
 Ու հովանի ընէ այն քայլ մը հողին
 Ըզմայլումիս յաւերժական յիշատակ»: ²⁶

*Անցել է արդէն երկու դար, բայց այսօր էլ «պայրոնեան»
 ձիթենիները դեռ կան, որոնք խաղաղութեան սօսափիւնով Հայոց
 կղզի այցելող բազմազգ ուխտաւորների համար, կարծես, նուազում են «անմահ Լորտին երգերն, յուշերն ու խոսերը»²⁷:*

«Պայրոնեան» ձիթենիների մասին բանաստեղծութիւն է գրել նաեւ հայ բժիշկ, պատմաբան եւ հասարակական գործիչ Վահրամ Թորգոմեանը (1858-1942): 1932ին «Բազմավէպ»ում տպագրուած «Լորտ Պայրընի ձիթենիէն» բանաստեղծութեան մէջ Վ. Թորգոմեանը նկարագրում է «հայոց» կղզին, Պայրոնի սիրած «հին, գեղեցիկ» ծառը,

Որուն մերքեւ քերդողն Անկլիկ՝
 Լորտ Պայրընը, կ'ըսեն սիրեր,

24 Ա.Ադ:

25 Ա.Ադ, 339-340:

26 Ա.Ադ:

27 Ա.Ադ:

Նստիլ, հանգչիլ, շա՛տ անգամներ,
 Ու երագել, երբ վանք կու գար
 Մեր մայրենիքն սորվիլ բարբառ:²⁸

«Պայրոնի» *ձիթենին*՝ «այդ ծառը հին», *հակառակ իր* «հարիւրամեայ եւ արեւի» *տարիքին*, «դիմադրելով բուք ու հովի», *մընացել է միշտ անասանն ու սաղարթախիտ եւ, կարծես թէ, դարձել է ուխտատեղի ինչպէս Ս. Ղազար այցելող ամէն մի հայի, այնպէս էլ* «հոն այցելող ամէն հիւրի» *համար*: «Լորտ Պայրոնի սիրած կանանց // Խորհրդաւոր այդ ծառին տակ» *Վ. Թորգոմեանին թուով էր թէ վերադարձել են երջանկութեամբ լի լցուած* «դպրոցական օրերն համայն», *եւ նա մտորումներով ու երազներով կարծես թէ նստած էր*

Ուսանելու դասեր վըսեմ
 Սուր Ղազարի մատենաներէն...

եւ իր հետ միասին կարծես թէ ներկայ էր նաեւ

Լորտ Պայրոն իսկ, ու հատորներ
 Գիրկը առած, մեր Հայ լեզուն
 Կը վերծանէր ան օրն ի բուն.
 Մտածելով նեցուկ մ՛ուժգին
 Ըլլալ մէկ օր հեզ Հայ Ազգին,
 Զոր արդարեւ անկեղծօրէն
 Սիրեց ուժգին սրտին խորէն²⁹:

Ս. Ղազար կղզու այցելուի՝ բանաստեղծ Վ. Թորգոմեանի համար դժուար է եղել բաժանուել Պայրոնի գեղատեսիլ ձիթենուց.

Այս սիրալի տեսարանէս.

Բայց՝ «պէտք է որ ա՛յլ եւս երթա՛մ»

Կ'ազդարարէր վանքին կոչնակ...

եւ նա, սթափուելով իր երազներինց ու վերադառնալով իրականութեան գիրկը, որպէս այդ անմոռաց օրուայ յիշատակ ձիթենուց պոկում է «փունջ մը ռստեր»

. զայն տանելու՝
 Իմ բարեկամ այն Հայերու
 Որ Պայրոնի մեծ տաղանդին
 Հիացումով յարգանք ունին:³⁰

28 ԹՈՐԳՈՄԵԱՆ, Վ., *Լորտ Պայրոնի ձիթենիէն*, «Բազմալեզայ», 1932, № 8-9, 380:

29 Անդ, 381:

Դրա հետ մէկտեղ բանաստեղծն արձանագրում է, որ Ս. Ղազարն ընդհանրապէս չըջապատուած է շատ անթառամ ձիթե-նիներով եւ հաւատում

..... թէ ձիթեմից
 Նշանակ է իմաստութեան,
 Խորհրդանիշ ազատութեան.
 Թէ՛ կ'աւետեն միշտ՝ փառք եւ սէր,
 Խաղաղութիւն, իւր տերեւներ.³¹

Սփիւռքահայ բժիշկ, բանաստեղծ եւ արձակագիր Արամա-յիս Սրապեանը (1910–1969) երեք բանաստեղծութիւն է ձօնել ազատութեան, արդարութեան եւ տառապած ժողովուրդների մեծ պաշտպանին՝ Պայրոնին, որոնք տարբեր ժամանակներում լոյս են տեսել «Բազմավէպ»ում: Դրանցից առաջինը տպագրուել է 1932ին³²: Ա. Սրապեանի նկարագրմամբ, Ս. Ղազար «կղզեակին հիւրընկալ մելամաղաձոտ ափումիին» թափառել ու երազել է Պայրոնը, «այս ծառերուն տակ խոռուն, այս քիւի տակ շողածին», նստել ու սովորել է մեր «հըրաշափառ սուրբ լեզուն»: Սակայն, չկայ այլեւս բանաստեղծը, ընդմիշտ լուել է նրա քնարի ձայնը:

Ու ալ չկա՛յ ծովուն դէմ մաքառող սիրտըր քոտր
 Եւ մտքիդ բոցն՝ երկնքի կայծակներէն ալ հըգոր:

Այդ բացակայութիւնն զգում են ոչ միայն Ս. Ղազար կղզու մայրավանքի վանական-գիտնականները, որոնք սրտում խոր հետք է մնացել Պայրոնի մասին աւագների թողած յիշողութիւններից, այլեւ նոյնիսկ այդ կղզեակի «նոնիներն վերամբարձ, երազառես եւ բուրեան», որոնք «ցաւի մը տակ սեւաւոր տրտմաթախիծ կը հեւան»³³:

Ա. Սրապեանի Պայրոնին նուիրուած երկրորդ, բաւականին ընդարձակ բանաստեղծութիւնն առաջին անգամ հրատարակուել է 1938ին՝ «Բազմավէպ»ում, իսկ 1971ին՝ բանաստեղծի «Անաւարտ երթ» ժողովածուում³⁴: Այս բանաստեղծութեան մէջ արտացոլում

30 Ա.նդ:

31 Ա.նդ:

32 Տե՛ս ՍՐԱՊԵԱՆ, Ա., Պայրըն ի Ս. Ղազար, «Բազմավէպ», 1932, № 6-7, 272:

33 Ա.նդ:

34 Տե՛ս ՍՐԱՊԵԱՆ, Ա., Պայրընեան ձիթեմիներուն տակ (Պայրընի սենեակին մէջ – Ս. Ղազար), «Բազմավէպ», 1938, № 4-5, 133-138: ՍՐԱՊԵԱՆ, Ա., Անաւարտ երթ, Երեւան, 1971, 11-18:

են անգլիացի բանաստեղծի մտորումներն ու խորհրդածութիւնները կեանքի, սիրոյ եւ արուեստի վերաբերեալ:

Ա. Սրապեանի Պայրոնին նուիրուած երրորդ բանաստեղծութիւնը, որ բազում խոհերի, երազների ու մտորումների արդիւնք է, տպագրուել է 1959ին՝ «Բազմավեպ»ում: Բանաստեղծը՝ Ա. Սրապեանը, ամէն երեկոյ իր դատեր հետ այցելել է Պայրոնի արձանին եւ երկար ժամանակ կանգ առնելով նրա առջեւ խորհել է:

Պանդոկին մէջ մեր, երբ ժամը ութն էր,
Կ'առնէի միշտ կանգ արձանիդ ի տես.
Արաբսիս, ապշած, նայուածքն յառած վեր,
Հարց կու տար ինձի, կը ճանչնայի՞՞ք քեզ³⁵:

Երկու բանաստեղծների հեռակայ, բայց սրտամօտ, ծանօթութիւնը «շատ խոր եւ շատ հին» էր: Այն գալիս էր Ս. Ղազարից, որտեղ նրանք, կարծես թէ, միասին շատ էին թափառել կղզում, երազել, խորհել ու մտորել կեանքի, լինելութեան մասին:

Պատմել կեանքդ անոր, այնքան դիւրին չէր,
Դիւրին չէր Քերթողդ երկիր քերել սին,
Սակայն, տեղին էր գէթ ըսել որ մեր
Ծանօթութիւնն էր շատ խոր եւ շատ հին:

Եւ միանգանայն օրինաչափ է եւ ոչ պատահական Պայրոնանձնաւորութեանը խորհրդանշող՝ բանաստեղծի այն եզրայանգումը, որ հայր ու աղջիկ մի օր նկատում են, թէ ինչպէս

Արիւնն, իսկապէս, կ'իջնէր ցակտէն հուր,
Ու կաթկըքելով պատուանդանն ի վար,
Կ'երթար, կը լուծուէր հընոցին մէջ նուր՝
Ժուրայէն իջնող վերջալոյսին վառ:³⁶

Այսպէս, տարագրութեան մէջ ապրող սփիւռքահայ բանաստեղծ Արամայիս Սրապեանը բարձր է գնահատել Պայրոնի ոչ միայն ստեղծագործութիւնները, այլեւ այն հանգամանքը, որ նա Ս. Ղազար կղզում սովորել է հայերէն, խորհել, մտորել ու երազել իր սիրած ձիթենիների տակ:

Պայրոնին նուիրուած բանաստեղծութիւն ունի նաեւ սփիւռքահայ (Ֆրանսիա) բանաստեղծուհի Մառի Ալթմանեանը (1913-1999): Նրա «Յուշերգ լորտ Պայրնիին համար» բանաստեղծութիւնն առաջին անգամ տպագրուել է «Բազմավեպ»ում 1963-ին, իսկ այ-

35 ՍՐԱՊԵԱՆ, Ա., Դարձեալ քեզի հետ. Պայրնն ի վիյնէով – Մ., «Բազմավեպ», 1959, № 9-10, 209:

36 Ա.Ա.:

նուհետեւ, որոշ փոփոխութիւններով, տեղ է գտել 1967-ին Փարիզում լոյս տեսած՝ բանաստեղծուհու «Ոսկի գեղօն» ժողովածուում³⁷: Վերոյիշեալ բանաստեղծութեան մէջ Մ. Աթմաճեանը շատ ջերմ ու հիացական տողեր է ձօնել Պայրոնին, մեծարել նրան ու հաւաստիացրել բոլորին, որ չկայ «ո՛չ մէկ մատեան հանճարաշունչ», ուր մեծ բանաստեղծի «... աստղն հիացիկ // Ծագած չըլլայ...»: Բանաստեղծուհին, կարծես թէ դիմելով իր ժամանակակիցին, մեծ սիրով ու յարգանքով բացականչում է.

Ձրկայ ո՛չ մէկ երազանքի, երգի պուրակ՝
 Ուր էու ժպիտդ ծաղկած չըլլայ,
 Գեղեցկութեան կամ խորհուրդի
 Վըսեմ կրակ՝
 Ուր էու սրտիդ խունկն հոտեւան
 Այրած չըլլայ,
 Պատմական հին կամ նոր չարիք՝
 Ուր դատաստանդ՝ դաշոյնի պէս
 Փայլատակած, շանթած չըլլայ...³⁸

Այնուհետեւ Մ. Աթմաճեանը յիշեցնում է, որ Ս. Ղազար Հայկական վանքում մինչեւ օրս պահպանուում է Պայրոնի յիշատակը, եւ աւելացնում, որ ինքը՝ բանաստեղծուհին, նստած Մխիթարեան միաբանութեան պարտէզում՝ «պայրոնեան» ձիթենիների արծաթափայլ ճիւղերի հովանու տակ, երազում է, խորհում հայերի մեծ բարեկամի՝ անգլիացի մեծ բանաստեղծի մասին.

Մըխիթարեան պարտէզին մէջ
 Կ'երագէի ձիթենիիդ
 Արծաթափայլ ճիւղերուն տակ
 <...>
 Ու Մերոպեան հըրաշատառ
 Հայ Քերականն՝
 Ուր դուն ուսար
 Նարեկացւոյ բարբառն անգոյգ,
 Լոյսն ակնարկիդ կը պարփակէր...³⁹

37 Ա.ԹՄԱ.ՃԵԱՆ, Մ., *Յուշերգ լորտ Պայրընի համար*, «Բազմավեպ», 1963, № 1-3, 47: Ա.ԹՄԱ.ՃԵԱՆ, Մ., *Ոսկի գեղօն. Բերթուածներ, 1960-1967*, Փարիզ, 1967, 93-95:

38 Ա.ԹՄԱ.ՃԵԱՆ, Մ., *Յուշերգ լորտ Պայրընի համար*, «Բազմավեպ», 1963, № 1-3, 47:

39 Ա.նդ.:

Բանաստեղծուհին հետեւում է նաեւ Պայրոնի դժուարութիւններով լի եւ անհարթ, բայց միաժամանակ հերոսական, ազատատենչ, արդարասէր եւ անմահութիւն տանող կեանքի ընթացքին.

Ալպիոնէն մինչեւ Ռավէն,
Վենետիկէն մինչեւ Լեման,
Ակոսթոլի եւ Կորնթոս,
Նըւիրական Առաքեալի
Եւ հերոսի ֆայլերգ տնկոտ՝
Կը տանէին քեզ մինչեւ հուսկ
Զոհաբերում
Այլ մինչեւ լո՛յս
Եւ դիւթական անմահութիւն...⁴⁰

Յօդուածներ Պայրոնի մասին: Հայ ընթերցողն առաջին անգամ ծանօթանում է Պայրոնի կենսագրութեանը, ստեղծագործութիւններին եւ Մխիթարեանների հետ նրա առնչութիւններին 1846ին «Բազմավէպ»ում հրատարակուած մի յօդուածի⁴¹ միջոցով, որտեղ բերուած են նաեւ հատուածներ հայերին վերաբերող նրա նամակներից: Յօդուածագիրը նշում է. «Ինչպէս ուրիշ շատ անապահորդներ, եւս առաւել Անգղիացիք որ Վենետիկ փաղաքը կու գան, մասնաւոր ետանդով մը կու գան նաեւ մեր սուրբ Ղազարու վանքը, որ տեսնեն թէ իրենց փաջ ու առաջին բանաստեղծը ու՛ր տեղ հայերէնի դաս առեր է, ու վարպետը ո՛վ է եղեր»⁴²: Փաստօրէն, Ս. Ղազարը վաղուց ուխտատեղի է դարձել ոչ միայն հայերի, այլեւ անգլիացիների համար, որոնք յատուկ այցելել են Ս. Ղազար՝ տեսնելու այն վայրը, որտեղ իրենց հայրենակիցը սովորել է հայերէն: Յօդուածից ընթերցողը տեղեկանում է նաեւ Պայրոնի՝ հայերին ցոյց տուած օգնութեան մասին եւ քաղում որոշ տեղեկութիւններ Յունաստանում նրա մահուան վերաբերեալ: Յօդուածը, որն, ըստ մեր ունեցած տուեալների Մխիթարեան պարբերականներում (եւ, ընդհանրապէս, հայ մամուլում) անգլիացի բանաստեղծի մասին առաջին հրատարակումն է, ծանօթացնում է հայ ընթերցողին Պայրոնին եւ նրա ստեղծագործութեանը:

Այստեղ նշենք նաեւ, որ «Բազմավէպ»ում, բացի հայ հեղինակների գործերից տեղ են գտել նաեւ Պայրոնի եւ հայերի ա-

40 Անդ:

41 Լորտ Պայրոն (անստորագիր), «Բազմավէպ», 1846, № 19, 293-297:

42 Անդ, 396:

ուրնչութիւններին վերաբերող օտարազգի հեղինակների ստեղծագործութիւններ: Այսպէս, 1866ին, «Բազմավէպ»ի յունուարեան համարում լոյս է տեսնում Ֆրանսիացի ռոմանտիկ բանաստեղծ, քաղաքական գործիչ, պատմաբան Ալֆոնս Մարի Լուի դը Լամարթինի (1790-1869) ձօներգն անգլիացի ռոմանտիկ բանաստեղծին՝ «Մարդն. առ լորտ Պայրն» ընդարձակ բանաստեղծութիւնը՝ Ս. Կայսերեանի թարգմանութեամբ⁴³:

1891-1894 թուականներին «Բազմավէպ»ը հայ մատենագէտ եւ թարգմանիչ Գ. Զարբհանալեանի (1827-1901) նախաձեռնութեամբ ու թարգմանութեամբ իր ընթերցողներին է ներկայացնում ծագումով գերմանացի, ֆրանսիական հայագէտ Գ. Ա. Շրումպֆի (1844-1892) հայոց պատմութեանը, լեզուին ու մշակոյթին վերաբերող յօդուածաշարը, որը «Les études Arméniennes en Europe» խորագրով հրատարակուել էր Լոնտոնի մի բանասիրական հանդէսում: «Բազմավէպ»ի 1894ի վեցերորդ համարում գետեղուած «Հայ լեզուի ուսումն յարեւմուտս» հայագիտութեանը նուիրուած յօդուածում տեղ են գտել նաեւ հատուածներ Բայրոնի «հայկական» նամակներից:

1911ին «Բազմավէպ»ում «Գիբբեր ու Թերթեր» խորագրի տակ ներկայացուում է «Բայրն, Մովսէէնը, Թարգմ. բնագրից Յ. Զ. Միրզայեանց⁴⁴, տպ. Փարոս, Թեհրան, 1911» գիրքը: *Խօսելով թարգմանչի կատարած աշխատանքի մասին՝ գրախօսը նշում է. «Գեղեցիկ Թարգմանութիւն մըն է Միրզայեանցի ծովահէնը: Լեզու մը եւ չափ մ'ունի որ կը սահի. եւ աղէկ կը Թարգմանեն Բայրնի կարուկ, կրճոտ, կրակոտ ոգին», իսկ ապա անելացնում՝ «Յաջողութեան նըպաստած է նաեւ Ռուսահայոց լեզուն. համառօտ, միշդ, պարզ՝ բոլորովին յստակ կը Թողու տեսնել Բայրնի միտքերը»⁴⁵: Գրախօսականում բերուած են նաեւ հատուածներ «Մովսէէնը» պօչմի առաջին (11-րդ տնից), երկրորդ (12-րդ տնից) եւ երրորդ (վերջին՝ 24-րդ տնից) նուագներին: Կատարելով այդ մէջբերումները՝ գրախօսը եզրակացնում է. «Միրզայեանց դժուար գործ մը յաջողու-*

43 Տե՛ս ԼԱՄԱՐԴԻՆ, Մարդն. առ լորտ Պայրն, Բազմավէպ», 1866, № 1, 23-30:

44 Միրզաեան (Միրզաեանց), Յովսէփ (1866-1935) – հայ Թարգմանիչ, պետական գործիչ: Տիրապետել է հայերէնին, ֆրանսերէնին, պարսկերէնին եւ անգլերէնին: Վարել է պետական պաշտօններ, բազմիցս ընտրուել է Իրանի մեջլիսի պատգամաւոր (1910, 1915, 1923):

45 Գիբբեր ու Թերթեր, «Բազմավէպ», 1911, № 6, 284:

թեամբ կատարած է»⁴⁶: Յաւօք, գրախօսականի հեղինակը չի նըշ-
 ւում, եւ նրա մասին մենք ոչինչ ասել չենք կարող:

Պայրոնի մահուան 100ամեակի առթիւ 1924ի «Բազմավեպ»
 ի չորրորդ համարն ամբողջովին նուիրուած է նրան, ընդ որում,
 նիւթերի գերակշիռ մասը երկու լեզուով է՝ հայերէն եւ անգլե-
 րէն: Հանդէսի խմբագրականում կարդում ենք. «Եթէ Անգղիա –
 իր մէջ երբեմն սնուցած անմեղադիր հակաուսկուծեամբն հանդերձ –
 իրաւամբ միշտ կը պարծի այդպիսի Հանեարի մը ծնունդ տուած ըլ-
 լալուն. եթէ Հովերոսներու Երկիրը հպարտ կը զգայ իմգիմքը՝ Պայ-
 րընի կորովը վայելելուն եւ հուսկ անոր գերեզմանն ըլլալուն, Ս. Ղա-
 գար պիտի պարծի յաւետ իր մայրենի բարբառը անոր աւանդելուն եւ
 անկէ ունեցած թանկագին յուշերն իր ծոցին մէջ յաւերժացնելուն հա-
 մար»⁴⁷:

Նոյն համարում «Լորտ Պայրըն ի Ս. Ղագար» ընդարձակ յօ-
 դուածով հանդէս է եկել նաեւ «Բազմավեպի» խմբագիր Ղեւոնդ
 Տայեանը, որտեղ նշում է, որ Ս. Ղագարն ուխտատեղի է դարձել
 ոչ միայն հայ գրօսաշրջիկների, այլեւ անգլիացիների եւ միւս օ-
 տարերկրացիների համար. «Եթէ Հայութեան համար գանազան տե-
 սակէտներով ուխտատեղի մ'է ան, պահապան մ'է թանկագին նշխար-
 ներու եւ ազգային գանձուց, Անգղիացոյն եւ անգլիախօս ազգերուն՝
 իրաւամբ ուխտավայր մ'է, Ս. Ղագարու՝ մէջ ըլլալով Պայրընի ամենէն
 աւելի ցայտուն ու խօսուց յիշատակը: Ոչ միայն անգլիախօսին, այլ ա-
 մէն օտարալեզու անձի համար կարծես անխոսափելի բնածին պարտք
 մ'է այն, պահի՛ղ մը նուիրելու մտածումի եւ խորհրդածութեան՝ Պայ-
 րընեան յուշերու շուրջ»⁴⁸: Յօդուածում տեղ են գտել նաեւ անգլ-
 լիացի մատենագիր Զորջ Էրիկ Մաքեյի խօսքերը. «Եթէ ամբողջ
 Եւրոպիայ մէջ կայ տեղ մը՝ ուր, յետ Լոնտօնի եւ Միսսօլունկիի,
 պէտք է Պայրընի արձանը կանգնել՝ այդ վայրը վննետիկ է: Վննետիկ
 ամէն կողմը կրնայ ըլլալ, Լիտոյ, Հասարակաց Պարտէզը կամ Ս. Ղա-
 գարու կղզին: Բայց եթէ վննետիկեցիք անտարբեր են արձանին տեղ-
 ւոյն համար, թող Հայե՛րը կանգնեն զայն Աստուծոյ անուանը»⁴⁹: Յօ-
 դուածում խօսուում է Բայրոնի հայերով հետաքրքրուելու, հայերէն
 սովորելու մասին, բերում են բազմաթիւ մէջբերումներ Հ. Աւգե-

46 Անդ, 285:

47 Պակ մը Պայրընի շիրմին (ստորագրուած է՝ Խմբագր. «Բազմավեպ»-ի),
 «Բազմավեպ», 1924, № 4, 105:

48 ՏԱՅԵԱՆ, Ղ., Լորտ Պայրըն ի Ս. Ղագար, «Բազմավեպ», 1924, № 4, 133:

49 Անդ:

րեանի «Ինֆնապատում օրագրութիւնից», նշուում է, որ Բայրոնի հայերէն ուսումնառութեամբ հետաքրքրուել է նաեւ իտալացի լեզուաբան, Բոլոնիայի համալսարանի պրոֆէսոր, «լեզուների հրէշ» (Բայրոնի արտայայտութեամբ, խօսել է աւելի քան յիսուն լեզուով) Ջուզեպպէ Մեցցոֆանտին:

Ղ. Տայեանի յօդուածում մանրամասնօրէն նկարագրուում է Բայրոնի Ս. Ղազար գալու դրուագը՝ նշելով թէ ինչպէս «Վեներտիկ հասնելէն քիչ օր վերջ, ամպոտ օր մը, իրիկուամ մօտ, կոնտոլայ կը մտնէ այցելելու արեւելաշունչ այդ կղզին Ս. Ղազար»⁵⁰: Բայրոնը ծանօթանում է Յարութիւն Աւգերեանի հետ, ում մասին յետագայում բազմաթիւ դրուատանքի խօսքեր է գրում իր նամակներում: Ամէն օր, երկու ժամ հիւրընկալուելուց յետոյ, հրաժեշտ է տալիս Մխիթարեաններին՝ կրկին վերադառնալու ակընկալիքով եւ խոստումով: Յօդուածում իրար են յաջորդում Բայրոնի Ս. Ղազարում անցկացրած օրերը: Յօդուածի միջոցով մենք ծանօթանում ենք Յ. Աւգերեանի «Ինֆնապատում օրագրութեան» հատուածներին, Բայրոնի նամակներին՝ հայերին վերաբերող հատուածներին, Թ. Մուրի դրանց տուած ծանօթագրութիւններին, Մխիթարեանների կողմից միմեանց յղուած նամակներին, վաւերագրութիւններին, որոնք տալիս են Բայրոնի «հայկական» շրջանի նկարագիրը եւ պատկերը:

Ղ. Տայեանի յօդուածին անմիջապէս յաջորդում է Բայրոնի կենսագրութեան վերաբերեալ մի յօդուած՝ Հ. Դ. Ս. ստորագրութեամբ⁵¹: Յօդուածագիրը համառօտակի անդրադառնում է Բայրոնի կենսագրութեան առանձին դրուագներին, նրա հայերէն սովորելուն, քաղաքական հայեացքներին, ստեղծագործութեանը, անհաւասարակչիւ բնաւորութեանը, գտնելով, որ «Պայրըն մեծ համար մ'եղաւ, այլ անկանոն երեւակայութիւն: Իւր տողերը սեղմ, կըտրուկ եւ վառվռուն՝ յախի յուսահատական երկրայութիւն մը կը յայտնեն. փոխանցական մաղձատութիւն մը եւ հիացումն ոգիւններու»⁵²: Ըստ յօդուածագրի, Բայրոնի գլուխ-գործոցի գլխաւոր հերոս Դօն Ժուանը հանդիսանում է «անձնաւորութիւն լուրջ եւ խելկատակ միանգամայն, հիաստանչ եւ լկտի, գիւցազն եւ ծաղրածու, վառ, յանդուգն եւ փոփոխական՝ հեղինակին նման»⁵³:

50 Ա.Աղ., 134:

51 Տե՛ս Հ. Դ. Ս., Համառօտ կենսագրական գիծեր Լորտ Պայրընի, «Բազմա-վէպ», 1924, № 4, 147-149:

52 Ա.Աղ., 149:

53 Ա.Աղ.:

Եղիա Փէչիկեանը 1924-ին «Բազմավէպում» հրատարակած «Լորտ Պայրըն Հայոց մէջ»⁵⁴ յօդուածում բերում է հատուածներ «Հայերէն-անգլերէն քերականութեան» ձեռնարկի համար Բայրոնի գրած առաջաբանից եւ հայերին վերաբերող նրա նամակներից: Յօդուածագիրը նշում է, որ «Այս ամենէն կը հետեւի որ Լորտ Պայրըն կատարելապէս հայկական հողի եւ շրջանակի մէջ կ'ապրէր. շատ սիրելի էին անոր՝ յետ իրեն հայրենի երկրին՝ հայ ազգը, անոր փառքերը, լեզուն... նոյն իսկ դարաւոր տառապանքները. եւ այս հայկական դէրը կամ շրջանը Լորտ Պայրընի բանաստեղծութեան եւ կեանքին պատմութեան դրուագներէն անբաժան պիտի մնայ»⁵⁵: Յօդուածում խօսուում է նաեւ Պայրոնի եւ Ալիշանի մասին, զուգահեռներ անցկացուում նրանց ստեղծագործական գործունէութեան միջեւ եւ նշում առկայ զուգադիպութիւնները: «Հոս սակայն շարք մ'ունիմք գեղեցիկ զուգադիպութեանց կամ զուգակշռի եզրներու երկու հանձարներու միջեւ որոնք նոյն դարու արեգակներ են: Նախ անոնց դիրքը նոյն դարուն մէջ. Երկուքն ալ գերաւորակ հանձարներ. յետոյ անոնց փոխադարձ պանդխտութիւնը. <...> ինչ որ Լորտ Պայրըն պանդխտութեամբ ի վեներտիկ, Ս. Ղազարու մէջ կը շարադրէր, նոյնը Հ. Ալիշան յԱնգղիայ, ի Լոնտրա իր պանդխտութեան մէջ կը հայացներ»⁵⁶, - գրում է Հ. Ե. Փէչիկեանը:

Յօդուածագիրը նշում է նաեւ յաջորդ զուգադիպութիւնը. դա «նոյն մեծ քերթողներու փոխադարձ հայ եւ անգլիերէն լեզուները սորվիլն է եւ երկուքին ալ փոխադարձ դժուարութիւնը. Հ. Ալիշան կ'ըսէ. Ի հայրենիս անդ քերթողին... գտադուով օտարութեանս այսպիսեաւ իմն կամեցայ սփոփել կամ տանջել ոչ դիրաթափ թարգմանութեամբ»⁵⁷: Ալիշանը նոյնպէս տեսնում է զուգադիպութիւնն այստեղ. «այնպիսի իմն հնարս հնարեալ եւ հեղինակին երբեմն արկանէր գանձն ի փորձ եւ ի տոյժ ուսանել զմերս հայերէն դժուարագիտ բարբառ ի մերում իսկ դրան վանաց»⁵⁸: Պայրոնը նոյնպէս նկատում է հայոց լեզուի դժուարութիւնները. «Դժուարին թուի ինձ լեզուն... քեպտեւ եւ ոչ անյադրելի... յառաջ դիմեցից», եւ այլուր «ի գրօսանս անձին ուսանիմ գհայոց լեզու ի մենաստանիս Հայոց... եւ զի տեսանեմ քաջ թէ դժուարանձեռնարկելի ինչ պիտոյ է մտացս՝ յոր խորտա-

54 Փէչիկեան, Ե., *Լորտ Պայրըն Հայոց մէջ*, «Բազմավէպ», 1924, № 4, 157-160:

55 Անդ, 158:

56 Անդ, 158-159:

57 Անդ, 159:

58 Անդ:

կեսցի. եւ զի աստանօր դժուարագոյնն է սա ի գրօսանս, ընտրեցի խոշտանգել զիս յայն պարապելով»⁵⁹: Այնուհետեւ Հ. Ե. Փէչիկեանը գըրում է Պայրոնի ստեղծագործութիւնների հայերէն թարգմանութիւնների մասին՝ յիշատակելով ոչ միայն Ալիշանի կատարած թարգմանութիւնները, այլեւ «Արեգում» տպագրուած «Մանֆրեդը», Յ. Թումանեանի թարգմանութեամբ Թիֆլիսում լոյս տեսած «Շիլիոնի կալանաւորը» եւ Կ. Պոլսում հրատարակուած «Երկիւնք ու երկիր» բանաստեղծութիւնը: Յօդուածի վերջում, տալով Պայրոնի քնարերգութեան ընդհանուր բնութագիրը, Հ. Ե. Փէչիկեանը գրում է. «անկեղծութիւն եւ զգացման պայծառ արտայայտութիւն. մտածութիւն՝ խոր ու վեհ. իրականութիւն կենդանի եւ չֆնաղ. կրօնք՝ միշտ վեր ու բարձր. երանի՝ թէ հայ ֆերթողն ալ այս ձիրքերով օժտուէր»⁶⁰:

«Բազմավէպ»ի սոյն համարում գետեղուած յաջորդ յօդուածի (անգլերէն)⁶¹ բնաբան է ընտրուած Նաբոլէոն Ա.ի մասին հետաքրքիր յիշողութիւնների հեղինակ, Փրանսիացի գրող կոմսուհի դը Ռեմիլզայի (1780-1821) հետեւեալ խօսքերը. «...նրա վերջին օրերի գեղեցկութիւնը եւ տխրութիւնը քաւեցին շատ մեղիքեր»: Այս խօսքերը, կարծես թէ, իրօք վերաբերում են Պայրոնին, քանի որ ինչպէս շեշտում է յօդուածագիրը, բանաստեղծի կայացրած վճռի մի մասն էր կազմում այն երազանքը, որպէսզի Յունաստանում գեղեցիկ վախճանով կարողանար քաւել իր մեղքերը: Միտոլոնգիկում նա յետադարձ հայեացք է նետում թախծոտ անցեալի վրայ, վերջիշում իր կեանքի ընթացքում թոյլ տուած բոլոր չարաշահումները, որոնք դեռեւս վաղ հասակում հիւծել էին նրա այրուող մարմինը: Այնուհետեւ յօդուածում մանրամասնօրէն նկարագրուած է բանաստեղծի տեղատարափ անձրեւի տակ ընկնելը, հիւանդանալը, կեանքի վերջին ըոպէները եւ մահը: «Պայրոնի մահը Յունաստանի համար ազգային դժբախտութիւն էր: Միտոլոնգիկներու համար այդ դէպքը գրեթէ անհաւատալի էր»⁶², - գըրում է յօդուածագիրը եւ անդրադառնում այն փաստին, որ այդ կապակցութեամբ Յունաստանում յայտարարուել է 21օրեայ սուգ: Յօդուածագիրն անդրադարձել է նաեւ Պայրոնի ուսման տարիներին, նրա առաջին ստեղծագործութիւններին, ամուսնութեանը եւ ապահարզանին:

59 Անդ:

60 Անդ, 160:

61 *Anyversary (անստորագիր)*, «Բազմավէպ», 1924, № 4, 149-156:

62 Անդ, 150:

Այդ համարում արտատպուած է անգլիացի բանաստեղծ Չարլզ Քամելի 1924ի Յունուարի 14ին ժնեւից «Բազմավէպ»ի խմբագիր Հ. Ղ. Տայեանին ուղղուած նամակը, որտեղ նա գրում է. «Քերթողին մահուընէն ասդին սահած հարիւր տարիներու շրջանին՝ ոչ մէկ տեղ չէ այնպէ՛ս մեծարուած իր յիշատակը եւ իր համեարը լաւագո՛յնս հասկցուած՝ ինչպէս Վեներտկոյ Միխթարեան Հայրերէն, որոնց նախորդներուն հետ Լորտ Պայրըն անցուցած է ժամեր՝ որոնք հաւանօրէն երջանկագոյններն եղան իր վիպական եւ աղմկայոյց կեանքին»⁶³: 1922ին Չ. Քամելն այցելում է Ս. Ղազար կղզի եւ խորապէս յուզուում, տեսնելով, թէ ինչպիսի յարգանքով են պահուում Պայրոնի նկարը եւ նրան պատկանող իրերն այն սենեակում, որտեղ նա սովորել է հայերէն. «Ես հիրաւիքուեցայ ձեր Եղբայրութեան ընդել ասպնջականութեամբը, ինծի թոյլ տրուեցաւ տեսնել գանձատունը հին ազգի մը մշակոյթին, եւ լսել Պատարագը Քրիստոնէական կրօնքն ընդգրկող առաջին ժողովրդին մատուան մէջ: Յիշատակն այդ օրուան պիտի մնայ հետս ամբողջ կեանքիս մէջ»⁶⁴, - գրում է Քամելը վերոյիշեալ նամակում: «Բազմավէպ»ի 1924ի ապրիլեան համարում ներկայացուած է նաեւ նրա «Միխթարեան հայրերուն ի Վեներտիկ» բանաստեղծութիւնը (անգլերէն եւ հայերէն: Չ. Քամելը գտնում է, որ

Եթէ ունի Անգլիա մարմինը, սիրտն՝ Յունաստան,
 Իր հոգիէն, օ՛ն եւ օ՛ն, կը ժառանգէք մաս մը դուք,
 Ազնւագոյնը թերեւս, զի ձեզի հետ կը մընան
 Խաղաղութիւնն ու Մտերիմ սէրը եւ ոչ ցաւն ու վիշտ⁶⁵:

(Թարգմ. Հ. Ա. Ղազիկեան)

«Բազմավէպ»ի այս համարում գետեղուած «Պայրոն» յօդուածում (անգլերէն) Ռ. Անդերսոնը մանրագնին վերլուծում է բանաստեղծի գրական ու հասարակական գործունէութիւնը, որոշում նրա տեղն ու դերն անգլիական ռումանտիզմի զարգացման մէջ եւ յանգում այն եզրակացութեանը, որ «եւ Միջերկրականից ու Արեւելքից ուղարկած որոշ նամակների Պայրոնը, եւ Ս. Ղազար վանքը նկարագրող ու հայրերի մասին ոգեւորութեամբ արտայայտուող Պայրոնը, դա իսկական, անաղարտ Պայրոնն է»⁶⁶:

63 «Բազմավէպ», 1924, № 4, 109:

64 Անդ:

65 ԳԱՄՄԵԼԼ, Չ., Միխթարեան հայրերուն ի Վեներտիկ, անդ, 113:

66 ANDERSON, R., *Byron*, անդ, 118:

«Բազմավեպ»ի 1924ի հինգերորդ համարում տպագրուած խմբագրական յօդուածում⁶⁷ թուարկուած են այն միջոցառումները, որոնք իրականացուել են «Անգղիոյ հոշակաւոր Քերթողին յիշատակին՝ զանազան երկիրներու մէջ՝ յանուն մարդկային ընկերութեան, որ անոր մէջ գտած էր զմայլանքի, փայփայանքի առարկայ դարձող լուսաշող ակունք մը, մարդկութեան փառքն ու զարդը կազմող անգին մարգարիտ մը»⁶⁸: Անգլիայում նախատեսուած միջոցառումներին մասնակցելու համար Անգլիայի պաշտօնական մարմիններէից հրաւէր են ստանում նաեւ Մխիթարեանները: Նրանք «Բազմավեպ»ի ապրիլեան բացառիկ համարը ամբողջութեամբ նուիրել էին «Պայրընի յիշատակին, որ լոյս ընծայուեցաւ Հայ եւ Անգղիերէն խիստ շահեկան յօդուածներով», եւ այդ միջոցառումներէից «առաջ արդէն տարածուած էր ան Լոնտօնի մէջ, ու բաշխուած էր զանազան բարձրաստիճան անձնաւորութեանց. դրկուեցաւ նաեւ օտար կառավարութեանց մօտ եղող անգղիական բոլոր դեսպաններուն եւ դիւանագիտական մերկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Լոնտօրայի մէկ քանի գլխաւոր թերթերուն»⁶⁹:

«Բազմավեպ»ի 1932ի առաջին համարում Պոլսաբեշտի «Magyarsay» օրաթերթից արտատպուած է գովասանքով, համակրանքով ու անկրկնելի տպաւորութիւններով լի մի փոքրիկ յօդուած⁷⁰, որտեղ հունգարացի մի սովորական զբօսաշրջիկ պատմում է այն տպաւորութիւնների մասին, որ նա ստացել է Ս. Ղազար այցելելու ժամանակ: Հունգար այցելուն արձանագրում է, որ Մխիթար Սեբաստացու «սկսուած գործը միեւնոյն հոգւով կը շարունակուի միշտ» եւ միանգամայն տեղին նկատում, որ «Այս հոգին ամէն բանէ աւելի կը բացատրէ հաստատութեան նշանաբանը, որուն մէջ զանգակը՝ է արթնութիւնը, բոցը՝ հոգեկան եռանդին նշանակ, ցուպը՝ կ'արտայայտէ թէ այս կրօնքին անդամները կ'ապրին առանց յօգնութիւն մանչնալու գաղափարականին հետապնդումին մէջ, եւ գիրք մը՝ գիտութեան հոգին կը ցուցնէ»: Հունգարացի այցելուն հիացմունքով է խօսում նաեւ Մխիթարեան մայրավանքի թանգարանի, տպարանի, պահպանող ձեռագրերի, միաբանութեան երրորդ արբանձօր՝ Տրանսիլուանիայի կոմս, հունգարահայ Ստեփանոս Ազոնց

67 Արձագանգներ Պայրընեան յորելեանէն (ստորագրուած է՝ խՄԲ.), «Բազմավեպ», 1924, № 5, 186-188:

68 Անդ, 186:

69 Անդ, 187:

70 Տե՛ս ՄԱՃԱՌ ԱՅՅԵԼՈՒ ՄԸ, Վենետիկի հայկական նեմարանը, «Բազմավեպ», 1932, № 1, 43:

Գիւլէրի, Պայրոնի («որուն ուսումնարանը խնամֆով պահուած է») մասին եւ աւելացնում. «մենք հունգարներս կրնանք պարծիլ Վենետիկի լեակին այս չֆնաղ կղզիին համար»:

1932ին «Բազմավէպ»ում լոյս է տեսնում Ռուբէն Որբերեանի ծաւալուն ուսումնասիրութիւնը Պայրոնի մասին⁷¹, որտեղ հայ բանաստեղծը տալիս է մանրամասն տեղեկութիւններ Պայրոնի կենսագրութեան եւ ստեղծագործութիւնների մասին՝ նկարագրելով նրա ճանապարհորդութիւնները դէպի Արեւելք, ամուսնութիւնը, բաժանումը կնոջից եւ դուստրից, ժամանումը Շուեյցարիա եւ Իտալիա, հանդիպումը Միխիթրեանների հետ եւ այլն: Չնայած Ռ. Որբերեանի ուսումնասիրութեան բոլոր արժանիքներին՝ որպէս հայերէն առաջին ծաւալուն հետազոտութիւն Բայրոնի կեանքի եւ ստեղծագործութեան մասին, այն, ցաւօք, զերծ է որոշ անճշտութիւններից:

Ռ. Որբերեանը գրում է. «Վենետիկի վաճառ մտնելէն առաջ երկիցս Թերեզայ կամկայ անուն եօթնետասնամեայ գեղուհին եղաւ, Գարպոնարիներու մէկ պետին ազնուական աղջիկը, որ զգայուն, զարգացած եւ վառ երեւակայութեամբ Զայլոս Հարոլտի առաջին երկու երգերը եւ Զիլիոնի կալանաւորը կարդացեր ու հիացեր էր բանաստեղծին վրայ: Դժբախտաբար, Թերեզայի հայրը քաղաքական դիտումներով անոր ձեռքը կիչիոլի կոմսին խոստացած էր, որ մեծահարուստ էր, սակայն վաթսուներեայ»⁷²: Իսկ այժմ տեսնենք թէ ինչ է ասում ինքը՝ Պայրոնը, Թերեզայի հետ ծանօթանալու մասին. «Ահա արդէն մէկ ամիս է, որ ես սիրահարուել եմ մի ոռմանական կոմսուհու՝ Ռաւեննայից, - գրում է Պայրոնը 1819ի Ապրիլի 24ին Դուգլաս Քիններդին ուղղուած նամակում, - որին մէկ տարի առաջ ամուսնացրել եմ կոմս Գուիչիոլիի հետ: Նա վաթսուներեայ տարեկան է, իսկ աղջիկը՝ քսան»⁷³: Այդ մասին Պայրոնը յիշատակում է նաեւ 1819ի Յուլիսի 26ին Աւգուստա Լիին յղած նամակում⁷⁴: Այնպէս որ, երբ Պայրոնը ծանօթացել է Թերեզայի հետ, նա արդէն ամուսնացած է եղել մօտ մէկ տարի եւ ոչ թէ «Թերեզայի հայրը քաղաքական դիտումներով անոր ձեռքը կիչիոլի կոմսին խոստացած էր»:

71 Տե՛ս ՈՐԲԵՐԵԱՆ, Ռ., *Լորտ Պայրոնը*, «Բազմավէպ», 1932, № 3, 119-125, № 4, 178-182, № 5, 225-231, № 6-7, 266-272, № 8-9, 374-379:

72 ԱՌԳ, 230:

73 *The Letters of George Gordon*, 6th Lord Byron, London—Toronto—New York, 1933, 244.

74 *The Selected Letters of Lord Byron*, New York, 1953.

Բացի դրանից, ըստ Ռ. Որբերեանի, «Վենետիկի մէջ սովորութիւն էր այն ատեն որ ազնուական դասակարգէն նոր ամուսնացած ամուլներ, պսակէն քանի մը օր վերջ, ուխտի կ'երթային Հայոց վանքը...»⁷⁵: Չնայած մեր փուլթաջան պրպտուածներին, մեզ ոչ մի սկզբնաղբիւրից չյաջողուեց պարզել նման սովորոյթի իսկուլթիւնը: Մեր կարծիքով դա անհաւանական է, եւ այդ վարկածը մեծ կասկած է յարուցում:

Այնուհետեւ Ռ. Որբերեանը գրում է, որ «Պայրըն վանքին մէջ մնաց: Ժամանակին արքահայրը, հայր Սումալեան եւ հայր Յարութիւն Աւգեր բաւական ընդարձակ սրահ մը յատկացուցին իրեն <...>: Տասնեակ մը օրեր մնալէ վերջ...»⁷⁶: Իսկ սեա թէ ինչ է գրում Բայրոնի հայոց լեզուի ուսուցիչ Յարութիւն Աւգերեանն այդ մասին. «Lord Byron <...> եկեալ ի տեսութիւն վանացա՝ ինդրեաց ուսանել ի նմանէ գհայկական բարբառ. եւ կամէր եւս բնակել ի վանս: Բայց քանզի ոչ ոք ի Միաբանից քանաչէր գնա ցայնժամ, ասացաւ նմա գալ ի Վենետիկ գոր ամենայն, եւ այնպէս ուսանել: Եւ նա սկսաւ գալ աւուրս յիսուն, եւ ուսանէր ժամս երկուս կամ երիս...»⁷⁷: Այնպէս որ Պայրոնի վանքում բնակուելու վարկածը նոյնպէս հերքուում է:

Կանաղացի հայասէր բանաստեղծ, Պայրոնի քնարերգութեան երկրպագու Լորենս Դակինը (Laurence Dakin, 1907-?) դեռեւս 1930ական թուականների սկզբներին այցելում է Ս. Ղազար եւ, ինչպէս Պայրոնը, առաջին իսկ հայեացքից սիրահարուում այդ «փոքրիկ Հայաստանին»: Դակինն իր հայասիրութիւնը յետագայում արտայայտում է «Աբարիսի երազը» բանաստեղծութեան մէջ (Թարգմ. Հ. Ե. Փ.)⁷⁸, իր իսկ խոստովանութեամբ՝ «քանի մը տող նուիրած եմ ձեր Ուխտի (Միլիթարեանների – Ա. Բ.) ազնուական գործին եւ ձեր ընկեռած հայրենիքին՝ Հայաստանի»⁷⁹: Իրօք «քանի մը տող», ընդամէնը տասնվեց տող, բաւականին ընդարձակ բանաստեղծութեան մէջ, սակայն այդ մի քանի տողերն էլ վկայում են, որ բանաստեղծը, որը «Պայրընի դպրոցին խոր ու վերամբարձ վիպականութիւնն ունի, քաշակի նրբութեամբ եւ արուեստի շնորհքով, խորապէս զգացել է օտարութեան մէջ ապրող եւ արարող հայերին տանջող վիշտն ու ցաւը:

75 ՈՐԲԵՐԵԱՆ. Ռ., նշ. աշխ., 266:

76 Ա.նդ., 231:

77 ՏԱՅԵԱՆ, Ղ., նշ. աշխ., 135-136:

78 ԴԱԿԻՆ, Լ., *Ապարիսի երազը*, «Բագմավէպ», 1934, № 9-10, 350-353:

79 Ա.նդ., 350 (ստորագրուած է՝ ԽՄԲ.):

Դառնագին է վիշտն անոր որ գիտե թե հայրենի
Երկիրն ու հողն է դարձած աներ, կործան, փարոբանդ:
Ո՛չ մըտերմի մահն և ոչ կորուստը մօր կաթոզին
Կարող եմ սիրտը փորձել անելի մեծ կսկիծով:⁸⁰

«Բազմավեպից» տեղեկանում ենք նաեւ, որ Անգլիայի «Բայրոնեան ընկերութիւնից» վանք են այցելում բազմաթիւ մտաւորականներ: «Անոնք կու գային ուխտաւորի մեծ յարգանքով Հայոց կղզին՝ ուր անելի քան դար մը առաջ ապրած էր ու խորիմ իրենց ցեղի համնարեղ մէկ զաւակը, անցեալ դարու մեծագոյն քերթողներէն մին՝ Լորտ Պայրըն, և ուր ոչ միայն Արեւելիի հիմաւորց փառաւկաթութեան մը շահը կը տեսնէր բոցավառ, այլ և սիրած ու սորված էր Հայ դասական լեզուն»⁸¹, - գրում է «Բազմավեպ»ը: Այցելուներին առաջնորդում են դէպի գրատուն, ձեռագրատուն, թանգարան, կանգ են առնում Պայրոնի սենեակում, որտեղ բանաստեղծը խօսել է հայ հայրերի հետ, ուսումնասիրել հայոց լեզուն, ցուցադրում են բանաստեղծի իրերը: Այնուհետեւ այցելուներին ուղեկցում են տպարան, ինչպէս նաեւ ցոյց են տալիս «պայրոնեան» ձիթենիները, որոնցից ուխտաւորները մէկ ճիւղ պոկում եւ տանում են որպէս յիշատակ:

1939ին «Բազմավեպ»ում արտատպւում է Փրանսիացի գրող Անդրէ Մօրուայի (1885-1967) Պայրոնին նուիրուած վէպից մէկ հատուած, որտեղ հեղինակը նկարագրում է Պայրոնի այցը Մըխիթարեան միաբանութիւն, Ս. Ղազար կղզու գեղեցկութիւնը, Հ. Յ. Աւգերեանի օգնութեամբ հայերէն սովորելը եւ «Անգլերէն-հայերէն փրականութեան» ձեռնարկի վրայ նրանց համատեղ աշխատանքը: Բացի դրանից, բերուած է նաեւ Ա. Մօրուայի վէպի այն հատուածը (թարգմ. Հ. Բ.), որտեղ նշուում է, որ «Մանֆրեդի» երրորդ արարի մի տեսարան «արձագանգն էր Պայրընի և հայ վարդապետներուն միջև տեղի ունեցած խօսակցութեանց»⁸²:

Արդէն յիշատակուած կանադացի բանաստեղծ Լ. Դակինը, 1940ին, պատրաստում է յօդուած «Բազմավեպ»ի համար, բայց երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով չի կարողանում այն ուղարկել Միխիթարեաններին: Միայն պատերազմից յետ-

80 Անդ, 352:

81 Պայրընի յիշատակը փառաւորուած (ստորագրուած է՝ ԽՄԲ.), «Բազմավեպ», 1937, № 2-5, 128:

82 ՄՕՐՈՒՄ, Ա., Պայրընի և Ս. Ղազարու մասին, «Բազմավեպ», 1939, № 1-2, 4:

տոյ, 1946ին, նրա յօդուածը (Թարգմ. Հ. Ե. Փ.) տպագրուում է «Բազմավէպում»⁸³: Յօդուածում հեղինակը բաւականին ուրոյն եւ հետաքրքիր ձեւով է խօսում «լեակին մէջ գտնուող այն փոքր կըղզեակի մասին, ուր կայ մենաստան մը, տեղ մը ուր կը բնակի Աստուած»⁸⁴, նկարագրում Մխիթարեան միաբանութեան ստեղծման պատմութիւնը, ոգեւորուած նշում, որ այնտեղ կան «երկու հազար հայերէն հին ձեռագիր մատեաններ, երեսուն հազար գիրքեր, ու գեղարուեստական անթիւ առարկաներ, բոլորն ալ հետաքրքրական»⁸⁵, համակրանքով հաստատում, որ Մխիթարեան հայրերը «իրենց խոր գիտութեամբ եւ իմաստութեամբ, բոլոր գիտնական ու բարձրաստիճան մարդոց հիացումը գրաւած են: Նախդէպ իր պաշտպանութիւնը շնորհեց անոնց: Պայրն, ինչպէս մանուկ մը իր մօրը, անոնց դիմեց երբ վատթարումը եւ յուսահատութիւնը իր սիրտը կը կրծէին, եւ անոնք բարեսիրտ գտնուեցան ու իրեն պարգևեցին մտքի իմաստութիւն: Պայրն անոնցմէ ստրվեցաւ հայերէն լեզուն, որովհետեւ հայ էին անոնք եւ Հայաստանէն գաղթած. Երկիր մը ուր Ս. Գիրքը գետեղած էր Եդեմի Պարտէզը <...> այնքան գեղեցիկ եւ հրապուրիչ է այդ երկիրը»⁸⁶:

«Բազմավէպ» հանդէսի վերջին տարիների ամիսոյի համարներում տեղ են գտել նաեւ մեր երեք յօդուածները⁸⁷: Առաջին յօդուածում, յենուելով հիմնականում Պայրոնի նամականու վրայ, տրւում է Պայրոնի եւ Մխիթարեանների ծանօթութեան ու առնչութիւնների հակիրճ նկարագիրը, երկրորդ յօդուածում՝ Պայրոնի այցելութիւնը Ս. Ղազար կղզի եւ հանդիպումը Մխիթարեան միաբանութեան վանական-գիտնականների հետ, որոնց նկատմամբ նրա հետաքրքրութիւնը չի սահմանափակուում սոսկ սովորական ճանապարհորդի կամ զբօսաշրջիկի հետաքրքրութեամբ, այլ վերածուում է գիտական համագործակցութեան, իսկ երրորդում՝ այդ համագործակցութեան առանձին դրուագներ, որոնք իրենց արտացոլումն են գտել հայ եւ օտարազգի հեղինակների աշխատանքներում: Բացի դրանից, անդրադարձել ենք հայ

83 DAKIN, L., *Սուրբ Ղազար*, «Բազմավէպ», 1946, № 9-10, 244-247:

84 Ա.նդ., 245:

85 Ա.նդ., 246:

86 Ա.նդ., 245:

87 ԲԵՔԱՐԵԱՆ, Ա., *Բայրոնը Մխիթարեանների մօտ*, «Բազմավէպ», 2001, № 1-4, 117-128: *Գրուագներ Բայրոնի հայ իրականութեան հետ ունեցած առնչութիւնները*, «Բազմավէպ», 2002, № 1-4, 97-117: *Բայրոնը Վենետիկի Մխիթարեանների մամուլի էջերում*, «Բազմավէպ», 2006, № 1-4, 157-217:

բանաստեղծների ներբողներին՝ նուիրուած Պայրոնին, ինչպէս նաեւ բայրոնեան թեմայով հայ նկարիչների ստեղծած գործերին: Վերջին յօդուածում, ժամանակագրական կարգով, առանձին-առանձին քննարկուում են տարբեր տարիներին Վենետիկի Մխիթարեանների հրատարակած Պայրոնի բազմաթիւ ստեղծագործութիւններ եւ նրա մասին յօդուածներ, որոնք լոյս են տեսել եւ առանձին գրքերով ու ժողովածուներում, եւ գետեղուել են Մխիթարեանների հանդէսներում:

ԱՆԱՀԻՏ ԲԵԿԱՐԵԱՆ

Summary

BYRON ON THE PAGES OF “BAZMAVEP”

ANAHIT BEKARYAN

In 1846, “Bazmavep” published a poem without any reference to its author and translator. Our research has shown that the passage was retrieved from “Childe Harold’s Pilgrimage” translated by Gevond Alishan.

In its further issues, “Bazmavep” occasionally addressed Byron’s work and published Armenian poets’ dithyrambs dedicated to Byron, who had studied the Armenian language and culture. In their works Armenian poets (Pechikian, Torgomian, Srapiian and Atmadjian) praised his restless soul and freedom-loving spirit.

The Armenian readers first learned about Byron’s biography and work through a paper, which was published in “Bazmavep” in 1846. The paper provides several excerpts from the poet’s letters concerning Armenians and reflects Byron’s collaboration with the Mekhitarists. Both Armenian and foreign (Lamartine, Gammell, Anderson, Dakin, etc.) authors addressed Byron’s work on the pages of “Bazmavep”. Some of these essays were published both in Armenian and English.